ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզպետարանն աշխատանքի է հրավիրում բարձրագույն կրթությամբ, աշխատանքային փորձով, օտար լեզուների (ռուսերեն, անգլերեն) և համակարգչային գիտելիքների իմացությամբ պատասխանատու անձանց՝ ՀՀ Արմավիրի մարզպետի ընդունարանում առկա գործավարուհու թափուր հաստիքը համալրելու նպատակով:

Ցանկացողները մինչև օգոստոսի 23-ը կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին (ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ.՝ (+374 237) 2 16 29):

Դիմող ՀՀ քաղաքացիները մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
• գրավոր դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
• անձնագրի պատճենը
• կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները)
• աշխատանքային գրքույկի պատճենը
• մեկ լուսանկար 3x4 սմ չափսի

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 17:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: